**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունիսի 2026 թվականի N 1541-Ա

## ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, նույն հոդվածի 2-րդ մասիՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդկետի 19-րդ ենթակետի պահանջներով և 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին (պայմանագրի կողմին) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | հանգամանքներիառաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/96 | 28 | Բանան | 1,121,920.00 | «Մարտունի» ՍՊԸ | 00899999 | - | 12.06.2026թ. | Մեծամորի համայնքապետարան | ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված | Հայտերի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մարտունի ՍՊԸ»-ի կողմից Հավելված 1-ով ներկայացվող «Դիմում Հայտարարություն*» փաստաթուղթը հաստատված չի եղել էլեկտրոնային-թվային ստորագրությամբ, ինչպես նաև «ռուսերեն լեզվով անվանումն է՝» դաշտը չի պարունակել Ընթացակարգի հրավերով պահանջվող տեղեկատվությունը, ինչպես նաև 28-րդ և 40-րդ չափաբաժինների մասով ներկայացվող «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթերում բացակայել է Ընթացակարգի հրավերով պահանջվող առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի, արտադրողի անվանման |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 40 | Պահածոյացված եգիպտացորեն | 549,000.00 | | | | | | | վերաբերյալ տեղեկատվությունը և տեխնիկական բնութագրերը, միաժամանակ ներկայացված հայտում բացակայել է Հավելված 1.3-ով ներկայացվող «Իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող» փաստաթուղթը: Դրանով պայմանավորված 2026 թվականի հունիսի 10-ին հանձնաժողովը որոշելնիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 2026 թվականի հունիսի 12-ին արձանագրել, որ սահմանված ժամկետներում «Մարտունի» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները: Այնուհետև՝ որոշվել է «Մարտունի» ՍՊԸ-ի հայտը 28-րդ, 40-րդ չափաբաժինների մասով գնահատել որպես անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի առաջին մասի 8-րդ կետի 8.11 և 8.15 ենթակետերով սահմանված, ինչպես նաև Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները: |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2026 թվականի հունիսի 22
ք.Մեծամոր